ԳԼՈՒԽ ԻԸ.

Ժողով 'ի Ս. Ցարութիւն և քննութիւն տեղեացն Հայոց։ Ցամառութիւն Դատաւորին։ Ընդդիմութիւն Ցունաց։ Ոստիկանի Կուսակալին մեկնիլն։ Ժողով 'ի Դատարանի։ Գիր Կուսակալին։ Դարձ Ոստիկանին 'ի Դամասկոս։ Ժողով 'ի Դատարանի լի խռովութեամբ։

ԺՈՂՈՎԵՑԱՆ դարձեալ 'ի Ս. Ցարութիւն ('ի 24 Մայիսի) եւ քննեցան մնացեալ տեղիքն Հայոց և արձանագրեցան, և Դատաւորն նստէր յեկեղեցին Ցունաց իւրովքն հանդերձ։ Եւ իբրեւ մատեան 'ի քննութիւն սեղանին Հայոց և սենեկին, Ցովսէփայ Արեմթացւոյ կոչեցելոյ՝ բարկացեալ Ցունաց աղաղակ բարձին առ Դատաւորն. եւ նա սրտմտեալ գոչէր և յանդիմանէր զնուրի Էֆէնտի իբր հակառակող հրովարտակին. և իբրեւ չանսաց նա բանից նորա, առաւել զայրացեալ աղաղակէր, հակառակ է քննութիւնդ Կայսերական հրամանին. և այնու բարկութեամբ եւ և գնաց 'ի տաճարէ անտի իւրովքն հանդերձ և մնացին անդ Գործակալքն, Քաղաքապետն, Նախիպն և Միւֆթին, և որքան կարելի էր հարեւանցի իմն քննեցին և տեսին, զի տեղիքն Հայոց, որպէս էին խորանքն և կանթեղքն մեծաւ մասամբ անկեալ էին 'ի ձեռս Ցունաց. և իբր թէ աւարտեալ զգործն մեկնեցան և նոքա։ Եւ յայտնի եղեւ ատելութիւնն որ 'ի մէջ Դատաւորին և գործակալաց. զի Մուվելլայն և Ոստիկան Կուսակալին գուն գործէին կատարել զհրաման Արքային և Դատաւորն ընդդիմացեալ կացէր ընդ նոսա. Խօճաքեանն և Քաղաքապետն արտաքուստ զհրաման Արքայի կատարել ձեւանային, այլ 'ի ներքուստ ընդ Դատաւորին էին։ Հայք զիւրաքանչիւրսն ողբէին առանձին սիրով աւարտել զգործն, այլ նոքա մրմռեալ ոգորէին ընդ միմեանս. ապա աղաչեցին զնուրի Էֆէնտի թախանձանօք խոնարհիլ 'ի հաշտութիւն, գնալ առ Դատաւորն եւ քաղցրութեամբ ցածուցանել զբարկութիւն նորին, որ եւ արար իսկ։

Եւ նորա գիջեալ 'ի կամս նորա 'ի վերին երեսս՝ գումարեաց Ժողով մեծ 'ի Ս. Ցարութիւն ('ի 29 Մայիսի)։